# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հունիսի 2025 **թվականի** N 1203-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՆՆԱ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԶԻ 59 ՀԱՍՑԵՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Աննա Ղազարյանի (ՀՎՀՀ՝ 67088995, գրանցման ամսաթիվը՝ 2022 թվականի դեկտեմբերի 8-ին) 2025 թվականի հունիսի 13-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի հունիսի 13-ին 7942-2025 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Աննա Ղազարյանին Գյումրի քաղաքի Շիրազի 59 հասցեում իրականացնել թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Աննա Ղազարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2025-06-24 12:28:26 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԴ-ի կողմից
mID

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025 թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<23>> հունիսի 2023 թվականի N 1202-Ա

**<<ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ>> ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁԱԳԵՏ ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Արթուր Կարապետի Վարդանյանի 2025 թվականի հունիսի 18-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** <<Գյումրու քաղաքային ճանապարհներ >> ծրագրի փորձագետ Արթուր Կարապետի Վարդանյանին տրամադրել 2024 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 2025 թվականի հունիսի 25-ից:

**2.** Ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 20 աշխատանքային օր՝ 2025 թվականի հունիսի 25-ից մինչև հուլիսի 22-ը ներառյալ:

**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արթուր Կարապետի Վարդանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<23>> հունիսի 2025 թվականի N 1201-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << « ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՄԻԽԱԿ ՀԱՅԿԱԶԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Միխակ Հայկազի Ղազարյանի 2025 թվականի հունիսի 19-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի « Բռնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց » համայնքային ոչ առևտրային կազմակերպության ( այսուհետ՝ կազմակերպություն ) տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Միխակ Հայկազի Ղազարյանին տրամադրել չվճարվող արձակուրդ՝ 2025 թվականի հունիսի 23-ից:
**2.** Չվճարվող արձակուրդի տևողությունը 10 օր՝ 2025 թվականի հունիսի 23-ից մինչև հուլիսի 2-ը ներառյալ:
**3.** Չվճարվող արձակուրդի ընթացքում Միխակ Հայկազի Ղազարյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել կազմակերպության ուսմասվար Հովհաննես Սարգսի Խզեյանին:
**4.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Միխակ Հայկազի Ղազարյանին և Հովհաննես Սարգսի Խզեյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<23>> հունիսի 2025 թվականի N 1200-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՄԱՐԻԱՄ ԱՇՈՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Մարիամ Աշոտի Սարգսյանի 2025 թվականի հունիսի 19-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի <<Կարմիր գլխարկ մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության ( այսուհետ՝ կազմակերպություն ) տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Մարիամ Աշոտի Սարգսյանին տրամադրել 2025 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդը՝ 2025 թվականի հունիսի 23-ից:
**2.** Ամենամյա երկարացված արձակուրդը՝ 25 աշխատանքային օր՝ 2025 թվականի հունիսի 23-ից մինչև հուլիսի 25-ը ներառյալ:
**3.** Ամենամյա երկարացված արձակուրդի ընթացքում Մարիամ Աշոտի Սարգսյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել կազմակերպության դաստիարակ Նաիրա Կարենի Մկրտչյանին:
**4.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարիամ Աշոտի Սարգսյանին և Նաիրա Կարենի Մկրտչյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«23» հունիսի 2025 **թվական** N 1199-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱԶԱՏՈՒՀԻ ՍՊԱՐՏԱԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ, ՍԱՄՎԵԼ ՄԿՐՏՉԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ, ՄԿՐՏԻՉ ՍԱՄՎԵԼԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի՝ Ֆլորիա Վաղարշակի Վարդանյանը (անձնագիր՝ AV 0308046 , տրված՝ 11.07.2022թ. 064-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի, Կազաչի պոստ թղմ. 241 շենք 28-29 հասցեում), որը լիազորագրով հանդես է գալիս քաղաքացի Ազատուհի Սպարտակի Մկրտչյանի անունից, 2025 թվականի մայիսի 30-ին դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով ք. Գյումրի Կազաչի պոստ 241 շենք №22 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել Ազատուհի Սպարտակի Մկրտչյանի ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Գյումրու քաղաքապետի 2005թվականի հուլիսի 29-ի №1581 որոշմամբ ք. Գյումրի Կազաչի պոստ 241 շենքի №22 բնակարանը հատկացվել է քաղաքացի Ազատուհի Մկրտչյանի 4 անձից բաղկացած ընտանիքին (իրեն, ամուսնուն, 2 տղային) և տրվել №22 միասնական օրդերը:

Քաղաքացի՝ Աշոտ Սամվել Վարդանյանը մահացել է (հիմք՝ ԲԱ 959048 մահվան վկայական):

Դիմումին կից ներկայացվել է Գյումրու քաղաքապետի 2005թվականի հուլիսի 29-ի №1581 որոշմամբ տրված №22 միասնական օրդերը, 2025 թվականի մայիսի 26-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ N 250643064210, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2025 թվականի մայիսի 27-ի տեղեկանքները, Հրայր Մուրադյան անհատական ձեռնարկության 2025 թվականի մայիսի 27-ի եզրակացությունը , Ազատուհի Սպարտակի Մկրտչյանի, Մկրտիչ Սամվելի Վարդանյանի, Սամվել Մկրտչի Վարդանյանի լիազորագրերը Գյումրի համայնքի Կազաչի պոստ 241 շենք №22 հասցեի բնակարանի իրենց հասանելիք բաժնեմասերի նվիրատվության ընդունման համար քաղաքացի Ֆլորիա Վաղարշակի Վարդանյանին լիազորելու վերաբերյալ,:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-

Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2025 թվականի մայիսի 30-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2025 թվականի հունիսի 18-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի՝ Ազատուհի Սպարտակի Մկրտչյանի լիազորված անձ՝ Ֆլորիա Վաղարշակի Վարդանյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## 2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա) Քաղաք Գյումրի Կազաչի Պոստ 241 դոս № 22 հասցեի 48.78 (քառասունութ ամբողջ յոթանասունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ 1169794 վկայական):

բ) Գյումրի քաղաքի Կազաչի պոստ 241 դոս № 22 հասցեի բնակարանը 2005 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 2005թվականի հուլիսի 29-ի №1581 որոշմամբ տրված №22 միասնական օրդեր ):

գ) Շիրակ Գյումրի Կազաչի պոստ թաղամաս 241 շենք 22 հասցեում հաշվառված բնակվում են Ազատուհի Սպարտակի Մկրտչյանը 2005 թվականից, Սամվել Մկրտչի Վարդանյանը 2014 թվականից, Մկրտիչ Սամվելի Վարդանյանը 2021 թվականից (հիմք՝ 2025 թվականի մայիսի 26-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ N 250643064210, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2025 թվականի մայիսի 27-ի տեղեկանքներ):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ՝ Մկրտիչ Սամվելի Վարդանյանի, Սամվել Մկրտչի Վարդանյանի, Ազատուհի Սպարտակի Մկրտչյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ.մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից կնքված անշարժ գույքի ձեռքբերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2025 թվականի մայիսի 30-ի N ԱՏ-30052025-99-0183 տեղեկանք):

ե) Գյումրու Կազաչի Պոստ ԴՈՍ 241 բազմաբնակարան շենքի 22 բնակարանի ընդհանուր վնասվածությունը գնահատվում է երկրորդ աստիճանի, մաշվածությունը՝ 30 տոկոս (հիմք՝ Հրաչյա Մուրադյան անհատական ձեռնարկության 2025 թվականի մայիսի 27-ի եզրակացություն):

զ) Քաղաքացի Ազատուհի Սպարտակի Մկրտչյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Կազաչի պոստ 241 դոս № 22 հասցեի բնակարանը վարձակալել է 2005 թվականի հուլիսի 29-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության

շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են
համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի Ազատուհի Սպարտակի Մկրտչյանի լիազորված անձ՝ Ֆլորիա Վաղարշակի Վարդանյանի դիմումը բավարարեց :

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-րդ, 54-րդ հոդվածի 1-ին մասի,55-րդ, 56-րդ, 57-րդ հոդվածի 1-ին մասի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ, 60-րդ հոդվածի 1-ին մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 38.1-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաք Գյումրի Կազաչի Պոստ 241 դոս № 22 հասցեի 48.78 (քառասունութ ամբողջ յոթանասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝

1) Ազատուհի Սպարտակի Մկրտչյանին ծնված 1960 թվականին,
2) Սամվել Մկրտչի Վարդանյանին ծնված 1956 թվականին,
3) Մկրտիչ Սամվելի Վարդանյանին ծնված 1978 թվականին

որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով:

2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ՝ Ազատուհի Սպարտակի Մկրտչյանին, Մկրտիչ Սամվելի Վարդանյանին, Սամվել Մկրտչի Վարդանյանին :
3. Քաղաքացիներ՝ Ազատուհի Սպարտակի Մկրտչյանին, Մկրտիչ Սամվելի Վարդանյանին, Սամվել Մկրտչի Վարդանյանին եռօրյա ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Ազատուհի Սպարտակի Մկրտչյանին, Մկրտիչ Սամվելի Վարդանյանին, Սամվել Մկրտչի Վարդանյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝**

2025-06-23 09:21:58 GMT+4
Հաստատված է ԷՀԵՆԳ-ի կողմից

miD

**Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թվական ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հունիսի 2025 **թվական** N 1198-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԼԻԴԱ ՄԻՔԱՅԵԼԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Սասուն Սերյոժայի Թամազյանը (նույնականացման քարտ՝ 012191870, տրված՝ 10.08.2020թ., 064-ի կողմից,հաշվառված՝ ք. Գյումրի, Մազմանյան 115ա շենք 31 հասցեում), որը լիազորագրով հանդես է գալիս քաղաքացի Լիդա Միքայելի Հովհաննիսյանի անունից, 2025 թվականի մարտի 14-ին դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Մսի կոմբինատ 1 շենք № 12 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել Լիդա Միքայելի Հովհաննիսյանին որպես սեփականություն :

Դիմումին կից ներկայացվել է «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2025 թվականի փետրվարի 11-ի Շ-248 գրությունը, բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշված անձանց վերաբերյալ 2025 թվականի հունվարի 13-ի N 250654065028 տեղեկանքը, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2025 թվականի մարտի 13-ի տեղեկանքը, Հրաչյա Մուրադյան անհատական ձեռնարկության 2025 թվականի փետրվարի 12-ի տեղեկանքը, Լիդա Միքայելի Հովհաննիսյանի լիազորագիրը Գյումրի համայնքի Մսի կոմբինատ 1 շենք №12 հասցեի բնակարանի իրեն հասանելիք բաժնեմասի նվիրատվության ընդունման համար քաղաքացի Սասուն Սերյոժայի Թամազյանին լիազորելու վերաբերյալ, 2025 թվականի մարտի 3-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Գյումրի» ցանցի տեղեկանքը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2025 թվականի մարտի 14-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2025 թվականի հունիսի 18-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի՝ Լիդա Միքայելի Հովհաննիսյանի լիազորված անձ՝

Սասուն Սերյոժայի Թամազյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## 2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա) Գյումրի համայնքի Մսի կոմբինատ 1 շենք 12 հասցեի 88.90(ութսունութ ամբողջ իննսուն հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ 1145265 վկայական):

բ) Գյումրու /Լենինականի/ Մսի կոմբինատ №1 շենքի բնակարանների բաշխման նյութերը չեն պահպանվել, հետևաբար վերոնշյալ շենքի 40 բնակարանը (ներկայիս 12) Լիդա Միքայելի Հովհաննիսյանին հատկացնելու վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել չենք կարող (հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2025 թվականի փետրվարի 11 -ի գրություն):

գ) Շիրակ Գյումրի Մսի կոմբինատ թաղամաս 1 շենք №40 հասցեում հաշվառված բնակվում է քաղաքացի՝ Լիդա Միքայելի Հովհաննիսյանը 1973 թվականից:Ք.Գյումրի Մսի կոմբինատ թաղամաս 1 շենք №12 հասցեում հաշվառված է Արուսյակ Ալբերտի Վարդանյանը 1995 թվականից (հիմք՝ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիությանծառայության 2025 թվականի մարտի 28-ի 42/94/20/81594-25 գրություն, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2025 թվականի փետրվարի 14-ի տեղեկանք):

դ) Գյումրու Մսի կոմբինատ 1 բազմաբնակարան շենքի №12 բնակարանի ընդհանուր վնասվածությունը գնահատվում է երկրորդ աստիճանի:Շենքի կրող կոնստրուկցիաների վիճակը գնահատվում է բավարար (հիմք՝ Հրաչյա Մուրադյան անհատական ձեռնարկության 2025թվականի մարտի 13-ի տեղեկանք):

ե) Քաղաքացի Լիդա Միքայելի Հովհաննիսյանը «Գյումրի» ցանցում բաժանորդ է 2002 թվականից մինչև օրս (հիմք՝ «ՀՀ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցի 2025 թվականի մարտի 3-ի տեղեկանք):

զ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ քաղաքացի՝ Լիդա Միքայելի Հովհաննիսյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և նրա կողմից 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ: (հիմք՝ 2025 թվականի փետրվարի 5-ի N ԱS-05022025-99-1504 տեղեկանք):

է) Քաղաքացի՝ Լիդա Միքայելի Հովհաննիսյանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետի՝ օրենքով սահմանված կարգով վարձակալ ճանաչված չլինելու կամ այդ հանգամանքն ապացուցող փաստաթղթեր առկա չլինելու, առնվազն վերջին տասը տարիների ընթացքում բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ այդ բնակարանը տիրապետելու և օգտագործելու, սեփականության իրավունքով այլ բնակելի տուն կամ բնակարան չունենալու, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, բնակարանն այլոց իրավունքներով ծանրաբեռնված չլինելու և օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ կիրառված չլինելու պայմաններին բավարարում է:

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց

գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու,օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն,այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետի՝ օրենքով սահմանված կարգով վարձակալ ճանաչված չլինելու կամ այդ հանգամանքն ապացուցող փաստաթղթեր առկա չլինելու, առնվազն վերջին տասը տարիների ընթացքում բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ այդ բնակարանը տիրապետելու և օգտագործելու, սեփականության իրավունքով այլ բնակելի տուն կամ բնակարան չունենալու, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, բնակարանն այլոց իրավունքներով ծանրաբեռնված չլինելու և օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ կիրառված չլինելու պայմաններին բավարարում է:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի՝ Լիդա Միքայելի Հովհաննիսյանի լիազորված անձ՝ Սասուն Սերյոժայի Թամազյանի դիմումը բավարարեց
:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ,24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ,4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-րդ, 54-րդ հոդվածի 1-ին մասի,55-րդ, 56-րդ, 57-րդ հոդվածի 1-ին մասի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ, 60-րդ հոդվածի 1-ին մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 38.1-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Գյումրի համայնքի Մսի կոմբինատ 1 շենք 12 հասցեի 88.90(ութսունութ ամբողջ իննսուն հարյուրերրորդական)քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝

   1) Լիդա Միքայելի Հովհաննիսյանին ծնված՝ 1945 թվականին

   որպես սեփականություն:
2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի՝ Լիդա Միքայելի Հովհաննիսյանին :
3. Քաղաքացի՝ Լիդա Միքայելի Հովհաննիսյանին եռօրյա ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Լիդա Միքայելի Հովհաննիսյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝**

2025-06-23 09:23:22 GMT+4

**Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թվական ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հունիսի 2025 **թվական** N 1197-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՆԵԼԼԻ ՅՈՒՐԻԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Սվետլանա Գրիշայի Մելիքսեթյանը (անձնագիր՝ AV 0202211, տրված՝ 02.05.2022թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի,Վարդ-բաղ 1թաղ.1մ/2 6շենք 22 հասցեում), որը լիազորագրով հանդես է գալիս քաղաքացի Մարգարիտա Վիկտորի Ներսիսյանի անունից, 2024 թվականի դեկտեմբերի 24-ին դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Վարդ Բաղ 1մ/2 1 թաղ. 6 շենք №22 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել Մարգարիտա Վիկտորի Ներսիսյանի ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Լենինականի մոսկովյան շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1987 թվականի հունվարի 22-ի № 6 որոշմամբ Գյումրի քաղաքի Վարդ բաղ 1մ/2 1 թաղամաս 6 շենք 22 բնակարանը հատկացվել է Մարգարիտա Վիկտորի Ներսիսյանի 4 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, 2 աղջկան, տղային:

Քաղաքացի՝ Հովսեփ Յուրիի Ներսիսյանը մահացել է (հիմք՝ ԲԱ 921158 մահվան վկայական):

Դիմումին կից ներկայացվել է «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2022 թվականի ապրիլի 6-ի Շ-798/1387/98 գրությունը, ՀՀ ՆԳՆ ՄՔԾ Գյումրի 3 բաժնի 2025 թվականի հունվարի 29-ի N 94/21-36403-25 գրությունը, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2025 թվականի հունվարի 16-ի տեղեկանքը, Նելլի Յուրիի Ավետիսյանի անձնագրի, Ռուզաննա Յուրիի Ներսիսյանի նույնականացման քարտի պատճենները, Մարգարիտա Վիկտորի Ներսիսյանի լիազորագիրը Գյումրի համայնքից Վարդ բաղ 1մ/2 1 թաղամաս 6 շենք 22 հասցեի բնակարանի իրեն հասանելիք բաժնեմասի նվիրատվության ընդունման համար քաղաքացի Սվետլանա Գրիշայի Մելիքսեթյանին լիազորելու վերաբերյալ :

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2024 թվականի դեկտեմբերի 24-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2025 թվականի հունիսի 18-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են դիմումատուի՝ քաղաքացի Մարգարիտա Վիկտորի Ներսիսյանի լիազորված անձ՝ Սվետլանա Գրիշայի Մելիքսեթյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## 2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Վարդ- Բաղի 1-ին մ/շ 1-ին թաղամաս 6 շենք, 22 հասցեի 77.55 (յոթանասունյոթ ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ №19022025-08-0050 վկայական)

բ) Գյումրի քաղաքի Վարդ- բաղ 1մ/շ 1 թաղ. 6 շենք №22 հասցեի բնակարանը 1987 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Լենինականի մոսկովյան շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1987 թվականի հունվարի 22-ի № 6 որոշում):

գ) Քաղաք Գյումրի Վարդ-Բաղ 1մ/շ 1 թաղամաս 6 շենք 22 հասցեում հաշվառված է 7 անձ: բնակվում է Սվետլանա Գրիշայի Մելիքսեթյանը (հիմք՝ ՀՀ ՆԳՆ ՄՔԾ Գյումրի 3 բաժնի 2025 թվականի հունվարի 29-ի N 94/21-36403-25 գրություն, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2025 թվականի հունվարի 16-ի տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ ՀՀ տարածքում քաղաքացիներ ՝ Նելլի Յուրիի Ավետիսյանի, Մարգարիտա Վիկտորի Ներսիսյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ: Քաղաքացի՝ Ռուզաննա Յուրիի Ներսիսյանի անվամբ Շիրակի մարզ, քաղաք Գյումրի Կ.Հալաբյան փողոց 8 շենք, 23 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված է սեփականության իրավունք: 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացու կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է Շիրակի մարզ, քաղաք Գյումրի Կ.Հալաբյան փողոց 8 շենք, 23 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ , իսկ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի 2024 թվականի նոյեմբերի 6-ի N ԱՏ-06112024-99-0388 տեղեկանք):

ե) Քաղաքացի՝ Մարգարիտա Վիկտորի Ներսիսյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Վարդ - Բաղ 1մ/շ 1 թաղ. 6 շենք №22 հասցեի բնակարանը վարձակալել է 1987 թվականի հունվարի 22-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի համաձայն՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության

շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին
և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Քաղաքացի՝ Ռուզաննա Յուրիի Ներսիսյանի անվամբ Շիրակի մարզ, քաղաք Գյումրի Կ.Հալաբյան փողոց 8 շենք, 23 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված է սեփականության իրավունք:

Քաղաքացի՝ Մարգարիտա Վիկտորի Ներսիսյանը ՌԴ քաղաքացի է:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, հիմք ընդունելով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետը՝ վաչական մարմինը քաղաքացի Մարգարիտա Վիկտորի Ներսիսյանի լիազորված անձ՝ Սվետլանա Գրիշայի Մելիքսեթյանի դիմումը բավարարեց մասամբ:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ,24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ,4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-րդ, 54-րդ հոդվածի 1-ին մասի,55-րդ, 56-րդ, 57-րդ հոդվածի 1-ին մասի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ, 60-րդ հոդվածի 1-ին մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 38.1-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Վարդ- Բաղի 1-ին մ/2 1-ին թաղամաս 6 շենք, 22 հասցեի 77.55 (յոթանասունյոթ ամբողջ հիսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝

   1) Նելլի Յուրիի Ավետիսյանին ծնված՝ 1972 թվականին

   որպես սեփականություն :

2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետակա գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի՝ Նելլի Յուրիի Ավետիսյանին:
3. Քաղաքացի՝ Նելլի Յուրիի Ավետիսյանին եռօրյա ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Նելլի Յուրիի Ավետիսյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի**
**համայնքի ղեկավար՝**

2025-06-23 09:39:20 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

miD

**Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թվական ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«23» հունիսի 2025 **թվական** N 1196-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԹՈՒՐ ՀՄԱՅԱԿԻ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Գայանե Վոլոդյայի Միրոյանը (անձնագիր՝ 53 1186031, տրված՝ 19.09.2016թ. Ռուսաստանի ԱԳՆ 37402), որը լիազորագրով հանդես է գալիս քաղաքացի Արթուր Հմայակի Կոստանյանի անունից, 2025 թվականի մայիսի 6-ին դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով ք. Գյումրի Անի թաղամաս 13 փողոց 3 շենք № 14 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել Արթուր Հմայակի Կոստանյանի ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Լենինականի քաղսովետի գործադիր կոմիտեի 1992 թվականի մայիսի 22-ի №6 որոշմամբ 13 փողոց 3 շենքի №14 բնակարանը հատկացվել է Հմայակ Ֆայենբերգի Կոստանյանի 5 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, կնոջը, 2 տղային, աղջկան:

Քաղաքացիներ՝ Ֆայիկ Հմայակ Կոստանյանը, Էմմա Վոլոդյայի Կոստանյանը, Հմայակ Ֆայենբերգի Կոստանյանը մահացել են (հիմք՝ ԱԲ 124113, X-ԻԿ № 663529, VIII-ԻԿ № 785493 մահվան վկայականներ):

Դիմումին կից ներկայացվել է Լենինականի քաղսովետի գործադիր կոմիտեի 1992 թվականի մայիսի 22-ի №6 որոշմամբ տրված № 14 միասնական օրդերը, Գյումրի 1 բաժնի 2025 թվականի ապրիլի 9-ի 42/94/19/93802-25 գրությունը, «Գարուն» համատիրության 2025 թվականի մայիսի 6-ի N 135 տեղեկանքը, Տաթևիկ Հմայակի Կոստանյանի անձնագրի պատճենը, Արթուր Հմայակի Կոստանյանի լիազորագիրը Գյումրի համայնքի Անի թաղամաս 13 փողոց 3 շենք № 14 բնակարանի իրեն հասանելիք բաժնեմասի նվիրատվության ընդունման համար քաղաքացի Գայանե Վոլոդյայի Միրոյանին լիազորելու վերաբերյալ:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2025 թվականի մայիսի 6-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2025 թվականի հունիսի 18-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի՝ Արթուր Հմայակի Կոստանյանի լիազորված անձ՝ Գայանե Վոլոդյայի Միրոյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## 2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Անի թաղամասի 13-րդ փողոց 3 շենք, № 14 հասցեի 80.56 (ութսուն ամբողջ հիսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով գրանցված է Գյումրի համայնքի անվամբ (հիմք՝ № 13062025-08-0004 վկայական) :

բ) Գյումրի համայնքի 13 փողոց 3 շենք №14 հասցեի բնակարանը 1992 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Լենինականի քաղսովետի գործադիր կոմիտեի 1992 թվականի մայիսի 22-ի №6 որոշում):

գ) Գյումրի քաղաք, Անի թաղամաս 13 փողոց 3-րդ շենք 14բնակարան հասցեագրությամբ 80.56քառակուսի մետր ընդհանուր մակերեսով անշարժ գույքին գրանցման ներկայացնելու նպատակով տրամադրվել է հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք. ,Անի թաղամասի 13-րդ փողոց , 3 շենք, 14 բնակարան (հիմք՝ Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի մայիսի 26-ի №958-Ա որոշում):

դ) Գյումրի քաղաք Անի թաղամաս 13 փող. 3 շենք 14 հասցեում հաշվառված են՝ Արթուր Հմայակի Կոստանյանը 2009 թվականից, Գայանե Վոլոդյայի Միրոյանը 2022 թվականից (հիմք՝ Գյումրի 1 բաժնի 2025 թվականի ապրիլի 9-ի 42/94/19/93802-25 գրություն, «Գարուն» համատիրության 2025 թվականի մայիսի 6-ի N 135 տեղեկանք):

ե) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ՝ Արթուր Հմայակի Կոստանյանի, Տաթևիկ Հմայակի Կոստանյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ: 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2025 թվականի մարտի 19-ի N ԱՏ-19032025-99-0415, 2025 թվականի մարտի 20-ի N ԱՏ 20032025-99-0191 տեղեկանքներ):

զ) Քաղաքացի՝ Արթուր Հմայակի Կոստանյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Անի թաղ. 13-րդ փողոց 3 շենք № 14 հասցեի բնակարանը վարձակալել է 1992 մայիսի 22-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել

քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու,իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանգիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Քաղաքացի՝ Տաթևիկ Հմայակի Կոստանյանը հանդիսանում է ՌԴ քաղաքացի:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետը՝ վարչական մարմինը քաղաքացի՝ Արթուր Հմայակի Կոստանյանի լիազորված անձ՝ Գայանե Վոլոդյայի Միրոյանի դիմումը բավարարեց մասամբ:

## 3.ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-րդ, 54-րդ հոդվածի 1-ին մասի,55-րդ, 56-րդ, 57-րդ հոդվածի 1-ին մասի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ, 60-րդ հոդվածի 1-ին մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 38.1-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Անի թաղամասի 13-րդ փողոց 3 շենք, № 14 հասցեի 80.56 (ութսուն ամբողջ հիսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝

   1) Արթուր Համայակի Կոստանյանին ծնված՝ 1989 թվականին

   որպես սեփականություն:

2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի՝ Արթուր Համայակի Կոստանյանին :
3. Քաղաքացի՝ Արթուր Համայակի Կոստանյանին եռօրյա ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Արթուր Համայակի Կոստանյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝**

**Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թվական ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«23» հունիսի 2025 թվականի N 1195-Ա

## ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՅԻ՝ ԱՆԻ ՀՈՎԻԿԻ ԱՓԻՆՅԱՆԻ ՀԵՏԱԳԱ ԽՆԱՄՔԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2025 թվականի հունիսի 19-ի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստին քննարկվել է անչափահաս՝ 21.06.2009 թվականին ծնված Անի Հովիկի Ափինյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №011030) հետագա խնամքը և դաստիարակությունը կազմակերպելու հարցը:

Երեխայի հայրը՝ Հովիկ Սամվելի Ափինյանը մահացել է 2023 թվականի մարտի 26-ին:

Երեխայի մայրը՝ Ամալյա Վահեի Ավագյանը չարաշահում է ալկոհոլը, չի զբաղվում երեխայի խնամքով և դաստիարակությամբ, նրա մոտ բացակայում են ծնողավարման հմտությունները:

2024 թվականի մայիսի 17-ից Անի Հովիկի Ափինյանը խնամվում է «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ում:

Բազմիցս կատարվել է տնայցեր Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի, Միասնական սոցիալական ծառայության Գյումրու տարածքային կենտրոնի և ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Մուշի բաժնի կողմից, համատեղ բացատրական աշխատանքներ է տարվել Ամալյա Վահեի Ավագյանի հետ, սակայն տարված աշխատանքները եղել են անարդյունք, ուստի անչափահաս՝ Անի Հովիկի Ափինյանի վերադարձը կենսաբանական ընտանիք նպատակահարմար չէ:

Ելնելով անչափահաս երեխայի լավագույն շահից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 26 մայիսի 2016 թվականի N 551-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 19-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Անչափահաս՝ 21.06.2009 թվականին ծնված Անի Հովիկի Ափինյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №011030) հետագա խնամքը և դաստիարակությունը կազմակերպել «Նագաշյան մանուկների տուն» երեխաների աջակցության կենտրոնում:

2025-06-23 10:50:58 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«23» հունիսի 2025 թվականի N 1194-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆԵՐՍԵՍ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՊՈՂՈՏԱ 33 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ներսես Հակոբյանի 2025 թվականի հունիսի 17-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի հունիսի 17-ին 8197-2025 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Ներսես Հակոբյանին Գյումրի քաղաքի Հաղթանակի պողոտա 33 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 4 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի հունիսի 17-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Ներսես Հակոբյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«23» հունիսի 2025 թվականի № 1193-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 76.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0671-0140-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Կամոյի փողոցի հարևանությամբ գտնվող 76.0 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0671-0140-ից) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կամոյի փողոց, 71/14 հողամաս**

2025-06-23 13:57:27 GMT+4
Հաստատված է ԷՀԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«23» հունիսի 2025 **թվականի** N 1192-Ա

**<<ՍՄԱՐԹ ՎԵՅՎ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ ՆՈՎԱ 5 Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով <<Սմարթ Վեյվ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի հունիսի 17-ին ներկայացրած հայտը, (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի հունիսի 17-ին 8198-2025 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել <<Սմարթ Վեյվ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Գյումրի քաղաքի Սայաթ Նովա 5 Ա հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 2.5 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի հունիսի 17-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Սմարթ Վեյվ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Մարտիկ Մաթոսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025.06.23 16:36:36 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից
miD

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## ՈՐՈՇՈՒՄ

«23» հունիսի 2025 թվականի N 1191-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ N65/2 ՀԱՍՑԵԻ 300.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, 600.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (569.84 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԶԱՐԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, ՅՈԼԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի N65/2 հասցեի 300.0(երեք հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասով կիսակառույց առևտրի և սպասարկման օբյեկտը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N10012025-08-0031 վկայական):

Նկատի ունենալով, որ նշված շինությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին, չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային կարգը սահմանելու մասին>> օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 23-ի N 26-Ա որոշումը և քաղաքացիներ Զարե, Յոլակ, Արմեն Գրիգորյանների դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2019 թվականին N1696 և 2023 թվականին N7545 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի N65/2 հասցեի 300.0(երեք հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասը, մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը գործող վաճառքի գներով՝ տվյալ հողամասի կադաստրային գնով, որը կազմում է 1914(հազար ինը հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 574200 (հինգ հարյուր յոթանասունչորս հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացիներ Զարե Գրիգորյանին, Յոլակ Գրիգորյանին, Արմեն Գրիգորյանին:
2. Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի N65/2 հասցեի 600.0(վեց հարյուր) քառակուսի մետր արտաքին (569.84(հինգ հարյուր վաթսունինը ամբողջ ութսունչորս հարյուրերորդական)քառակուսի մետր ներքին) մակերեսով, 9180000(ինը միլիոն հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով կիսակառույց առևտրի և սպասարկման օբյեկտը՝ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը գործող վաճառքի գներով ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Զարե Գրիգորյանին, Յոլակ Գրիգորյանին, Արմեն Գրիգորյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացիներ Զարե Գրիգորյանը, Յոլակ Գրիգորյանը, Արմեն Գրիգորյանը պարտավոր են 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
4. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացիներ Զարե Գրիգորյանի, Յոլակ Գրիգորյանի, Արմեն Գրիգորյանի միջոցների հաշվին:
5. Քաղաքացիներ Զարե Գրիգորյանին, Յոլակ Գրիգորյանին, Արմեն Գրիգորյանին տրամադրել կիսակառույց շինությունն ավարտին հասցնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման և շինարարությունն ավարտելու վերաբերյալ տվյալներով:

2025-06-23 16:34:01 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից
mID

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«23» հունիսի 2025 **թվականի** N 1190-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԿԱՐԵՆ ԱԼԲԵՐՏԻ ՄԵՔԻՆՅԱՆԻՆ, ԱԻԴԱ ՀՈՎՍԵՓԻ ՄԵՔԻՆՅԱՆԻՆ, ԱԼԲԵՐՏ ԿԱՐԵՆԻ ՄԵՔԻՆՅԱՆԻՆ, ԿԱՐԱՊԵՏ ԱԼԲԵՐՏԻ ՄԵՔԻՆՅԱՆԻՆ, ՄԱՐԻԱՄ ԱԼԲԵՐՏԻ ՄԵՔԻՆՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Արմեն Ջուլբերտի Խոցանյանը (նույնականացման քարտ՝ 006166698, տրված՝ 18.07.2017թ., 016-ի կողմից,հաշվառված՝ ք. Գյումրի, Խորենացու փող. 26 շենք , 48 հասցեում), որը լիազորագրով հանդես է գալիս քաղաքացի Կարեն Ալբերտի Մեքինյանի անունից, 2025 թվականի ապրիլի 22-ին դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով ք. Գյումրի Մուսայելյան փողոց 92 շենք 2 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել Կարեն Ալբերտի Մեքինյանի ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Գյումրու քաղաքապետի 2002 թվականի փետրվարի 6-ի №80 որոշմամբ Գյումրի քաղաքի Մուսայելյան փողոց 92 շենք թիվ 2 բնակարանը հատկացվել է Ալբերտ Մեքինյանի 8 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, կնոջը, 2 տղային, հարսին, թոռանը, աղջկան, մորը և տրվել №2 միասնական օրդերը:

Քաղաքացիներ՝ Ալբերտ Մեքինյանը և Մարիամ Պարույրի Կարապետյանը մահացել են (հիմք՝ ԱԱ 047388, ԱԱ 234686 մահվան վկայականներ ):

Դիմումին կից ներկայացվել է Գյումրու քաղաքապետի 2002 թվականի փետրվարի 6-ի №80 որոշմամբ տրված №2 միասնական օրդերը, բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ 2025 թվականի ապրիլի 11-ի №25108108076, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2025 թվականի ապրիլի 22-ի տեղեկանքները, Կարեն Ալբերտի Մեքինյանի, Աիդա Հովսեփի Մեքինյանի, Ալբերտ Կարենի Մեքինյանի, Կարապետ Ալբերտի Մեքինյանի, Մարիամ Ալբերտի Մեքինյանի, Հասմիկ Սինյորի Մեքինյանի անձնագրերի պատճենները, Կարեն Ալբերտի Մեքինյանի ձեռագիր լիազորագիրը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի

Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2025 թվականի ապրիլի 22-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2025 թվականի հունիսի 18-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի՝ Կարեն Ալբերտի Մեքինյանի լիազորված անձ՝ Արմեն Ջուլբերտի Խոցանյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## 2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Շ.Ազնավուրի փողոց 92 շենք, № 2 հասցեի 84.2 (ութսունչորս ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 12062025-08-0054 վկայական):

բ) Գյումրի համայնքի Մուսայելյան փողոց 92 շենք №2 հասցեի բնակարանը 2002 թվականի փետրվարի 6-ից հանձնված է բնակության (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 2002թվականի փետրվարի 6-ի №80 որոշմամբ տրված №2 միասնական օրդեր ):

գ) Շիրակ Գյումրի Շառլ Ազնավուրի փ. 92 շենք ( նախկին Մուսայելյան փողոց 92) 2 հասցեում հաշվառված է 13 անձ, բնակվում է 6 անձ (հիմք՝ բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ 2025 թվականի ապրիլի 11-ի №25108108076, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2025 թվականի ապրիլի 22 -ի տեղեկանքներ):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ ՀՀ տարածքում Աիդա Հովսեփի Մեքինյանի, Մարիամ Ալբերտի Մեքինյանի, Ալբերտ Կարենի Մեքինյանի, Կարապետ Ալբերտի Մեքինյանի, Կարեն Ալբերտի Մեքինյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և նրանց կողմից 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ:Հասմիկ Սինյորի Մեքինյանի անվամբ մարզ Շիրակ, համայնք Անի Մարալիկ ք. Ձերժինսկու փողոց 13 շենք 18 բնակարանի նկատմամբ գրանցված է ընդհանուր բաժնային սեփականության իրավունք (հիմք՝ (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2025 թվականի ապրիլի 2-ի N ԱՏ-02042025-99-0443 տեղեկանք):

ե) Քաղաքացի՝ Կարեն Ալբերտի Մեքինյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Մուսայելյան փողոց 92 շենք №2 հասցեի բնակարանը վարձակալել է 2002 թվականի փետրվարի 6-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու

իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունիիրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանգիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Հասմիկ Սինյորի Մեքինյանի անվամբ մարզ Շիրակ, համայնք Անի Մարալիկ ք. Ձերժինսկու փողոց 13 շենք 18 բնակարանի նկատմամբ գրանցված է ընդհանուր բաժնային սեփականության իրավունք:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի Կարեն Ալբերտի Մեքինյանի լիազորված անձ՝ Արմեն Ջուլբերտի Խոցանյանի դիմումը բավարարեց մասամբ :

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-րդ, 54-րդ հոդվածի 1-ին մասի,55-րդ, 56-րդ, 57-րդ հոդվածի 1-ին մասի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ, 60-րդ հոդվածի 1-ին մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 38.1-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Շ.Ազնավուրի փողոց 92 շենք, № 2 հասցեի 84.2 (ութսունչորս ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝

    1) Կարեն Ալբերտի Մեքինյանին ծնված 1975 թվականին,
    2) Աիդա Հովսեփի Մեքինյանին ծնված 1957 թվականին,
    3) Ալբերտ Կարենի Մեքինյանին ծնված 1999 թվականին,
    4) Կարապետ Ալբերտի Մեքինյանին ծնված 1982 թվականին
    5) Մարիամ Ալբերտի Մեքինյանին ծնված 1977 թվականին

    որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով:
2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ՝ Կարեն Ալբերտի Մեքինյանին, Աիդա Հովսեփի Մեքինյանին, Ալբերտ Կարենի Մեքինյանին, Կարապետ Ալբերտի Մեքինյանին, Մարիամ Ալբերտի Մեքինյանին :
3. Քաղաքացիներ՝ Կարեն Ալբերտի Մեքինյանին, Աիդա Հովսեփի Մեքինյանին, Ալբերտ Կարենի Մեքինյանին, Կարապետ Ալբերտի Մեքինյանին, Մարիամ Ալբերտի Մեքինյանին եռօրյա ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Կարեն Ալբերտի Մեքինյանին, Աիդա Հովսեփի Մեքինյանին, Ալբերտ Կարենի Մեքինյանին, Կարապետ Ալբերտի Մեքինյանին, Մարիամ Ալբերտի Մեքինյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝**

2025-...-23 09:40:26 GMT+4
Ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

**Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թվական ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«23» հունիսի 2025 թվականի N1189Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 03-Ի N 214-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի փետրվարի 03-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման մշտական հանձնաժողով ստեղծելու,նրա գործառույթները սահմանելու, առաջարկների ներկայացման հայտի և նախնական գնահատման աղյուսակի ձևաթղթերը սահմանելու մասին» 214-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշման Հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2025թ.
ք. Գյումրի

2025-06-23 10:22:42 GMT+4

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հավելված
ՀՀ ՇՄ Գյումրի համայնքի ղեկավարի
«23» հունիսի 2025 թվականի
N 1129-Ա որոշման

«Գյումրի համայնքի ղեկավարի
«03» փետրվարի 2025 թվականի
N 214-Ա որոշման»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

| հ/հ | Հանձնաժողովի անդամի անունը, ազգանունը | Զբաղեցրած պաշտոնը, զբաղմունքը | Հանձնաժողովում կարգավիճակը |
|---|---|---|---|
| 1 | Ավետիս Առաքելյան | Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ | Հանձնաժողովի նախագահ |
| 2 | Ալվարդ Հակոբյան | Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստի պարտականությունները կատարող | Հանձնաժողովի նախագահի տեղակալ |
| 3 | Լենա Մխիթարյան | Համայնքապետարանի աշխատակազմի ծրագրերի և զարգացման պատասխանատու, մասնակցային բյուջետավորման գործընթացի համակարգող | Հանձնաժողովի քարտուղար |
| 4 | Լուսինե Նազարյան | Ավագանու անդամ | Հանձնաժողովի անդամ |
| 5 | Լիզա Գասպարյան | Ավագանու անդամ | Հանձնաժողովի անդամ |
| 6 | Աննա Մուրադյան | Ավագանու անդամ | Հանձնաժողովի անդամ |
| 7 | Արտակ Հարությունյան | Ավագանու անդամ | Հանձնաժողովի անդամ |
| 8 | Կարեն Մխիթարյան | Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի ժ/պ | Հանձնաժողովի անդամ |
| 9 | Հովհաննես Ղազարյան | Գլխավոր ճարտարապետի օգնական | Հանձնաժողովի անդամ |
| 10 | Անուշ Խաչատրյան | «Կոմպասս» ՀԿ փորձագետ | Հանձնաժողովի անդամ |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«23» հունիսի 2025 թվականի №1188-Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 35 ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով «Ֆրիդ Սողոյանի» Մշակութային հիմնադրամի հիմնադիրների խորհրդի նախագահ Տիգրան Մանուկյանի գրությունը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №7463 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաք, Ս. Համբարձումյան փողոց 35 գրադարան հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական N 13112024-08-0018) վերահասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ս. Համբարձումյան փողոց, 7 շինություն**

2025.06.23 09:45:46 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«20» նոյեմբերի 2025 **թվականի** N 1187-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԹՈՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ(1/2ՄԱՍ) ԵՎ ՎԵՐԳՈՒՇ ԺՈՐԺԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ(1/2ՄԱՍ) ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ՓՈՂՈՑ N 19 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 481.75 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 332.68 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Թոմիկ Հարությունի Խաչատրյանին(1/2 մաս) և Վերգուշ Ժորժիկի Խաչատրյանին(1/2 մաս) բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շիրվանզադեի փողոց N 19 հասցեի տան օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 332.68 (երեք հարյուր երեսուներկու ամբողջ վաթսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և սեփական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված են 481.75(չորս հարյուր ութսունմեկ ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի շինություններ:

Քաղաքացի Թոմիկ Հարությունի Խաչատրյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի, նրա վրա առկա շինությունների և սեփական հողամասում ինքնակամ կառուցված բնակելի շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի, հիմք ընդունելով քաղաքացի Թոմիկ Հարությունի Խաչատրյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի մարտի 20-ին N 5311 թվագրմամբ), հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023HQLB9C և 2023S6T49B ծածկագրերը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Ճանաչել քաղաքացիներ Թոմիկ Հարությունի Խաչատրյանին(1/2 մաս)(ծնված 1945 թվականի նոյեմբերի 3-ին) և Վերգուշ Ժորժիկի Խաչատրյանին(1/2 մաս)(ծնված 1952 թվականի դեկտեմբերի 10-ին) բաժնային սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Շիրվանզադեի փողոց N 19 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 300.0 (երեք հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:

2.Գյումրի քաղաքի Շիրվանզադեի փողոց N 19 հասցեին կից, սահմանված չափից ավել օգտագործվող 32.68 (երեսուներկու ամբողջ վաթսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը հողամասի օտարման պահին կազմում է 4442 (չորս հազար չորս հարյուր քառասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 145164 (մեկ հարյուր քառասունհինգ հազար մեկ հարյուր վաթսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացիներ Թոմիկ Հարությունի Խաչատրյան և Վերգուշ Ժորժիկի Խաչատրյանին:

3.Քաղաքացիներ Թոմիկ Հարությունի Խաչատրյանին(1/2 մաս) և Վերգուշ Ժորժիկի Խաչատրյանին(1/2 մաս) բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շիրվանզադեի փողոց N 19 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 481.75(չորս հարյուր ութսունմեկ ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Թոմիկ Հարությունի Խաչատրյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

5.Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» հունիսի 2025 **թվականի** N 1186-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության բռնցքամարտի դեռահասների 2025 թվականի հունիսի 22–27–ը Երևան քաղաքում կայանալիք առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով բռնցքամարտի ֆեդերացիայի 2025 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1–ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2025 թվականի հունիսի 20-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության բռնցքամարտի դեռահասների առաջնությանը գործուղման ծախսերի 2025 թվականի հունիսի 22–27–ը Երևան քաղաք գործուղել 16 մարզիկի և 2 մարզիչի, գործուղման ծախսերի համար հատկացնել (միայն ճանապարհածախս) 54.000(հիսունչորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ–գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025 թ. ք.Գյումրի**

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թ.
---հունիսի--- ---20-ի--- N ---1186-Ա---որոշման

# ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության բռնցքամարտի դեռահասների առաջնությանը **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

| Թիվ | Ազգանուն | Անուն | Մարզիկ/մարզիչ | Անձնագիր | Հաշվեհամար | Գումար |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Բարսեղյան | Լևոն | Մարզիկ | AL0662532 | 163000134110 | 3.000 |
| 2. | Մինասյան | Սերժ | Մարզիկ | AL0257607 | 1570090157001500 | 3.000 |
| 3. | Սուվարյան | Վահան | Մարզիկ | AV0539452 | 1570020874338700 | 3.000 |
| 4. | Ավետիսյան<br>Ավետիսյան | Գրիգոր<br>Շուշա | Մարզիկ<br>ծնող | AV0432485 | 2470088213880000 | 3.000 |
| 5. | Գասպարյան | Արա | Մարզիկ | AX0234833 | 2470004087701009 | 3.000 |
| 6. | Մկրտչյան<br>Մկրտչյան | Համլետ<br>Ռուդիկ | Մարզիկի<br>ծնող | 010760734 | 1510038610110200 | 3.000 |
| 7. | Բաղդասարյան<br>Անդրեասյան | Նարեկ<br>Քրիստինե | Մարզիկի<br>ծնող | AS0251252 | 220541819334000 | 3.000 |
| 8. | Համբարյան<br>Կարապետյան | Անդրանիկ<br>Գոհար | Մարզիկի<br>ծնող | AU0692111 | 16600713012200 | 3.000 |
| 9. | Անդրանիկյան | Հայկազ | Մարզիկ | AX0623862 | 1570042903579000 | 3.000 |
| 10. | Ադամյան | Գուրգեն | Մարզիկ | AU0460124 | 11802059495800 | 3.000 |
| 11. | Մկրտչյան | Արթուր | Մարզիկ | AX0486968 | 19300465533100 | 3.000 |
| 12. | Մինասյան | Նարեկ | Մարզիկ | AX0257061 | 2477403550260000 | 3.000 |
| 13. | Կիրիյակ | Արման | Մարզիկ | AX0488345 | 2478901958420000 | 3.000 |
| 14. | Պետրոսյան | Գրիգոր | Մարզիկ | AO0243125 | 11802063864900 | 3.000 |
| 15. | Աստատուրյան | Ժորա | Մարզիկ | AL0605094 | 2477403550420008 | 3.000 |
| 16. | Հարթենյան<br>Սոկոյան | Արման<br>Լուսինե | Մարզիկ<br>ծնող | AU0298877 | 2470068986280025 | 3.000 |
| 17. | Խզեյան | Հովհաննես | Մարզիչ | 010259604 | 15100958849388 | 3.000 |
| 18. | Բաղդասարյան | Արմեն | Մարզիչ | 009225400 | 19300670681900 | 3.000 |
| **Ընդամենը** | | | | | | **54.000** |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«20» նոյեմբերի 2025 թվականի N 1185-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ 188Ա ՇԵՆՔԻ ԲԱԿԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով Գյումրի համայնքի Շահումյան 188ա շենքի բակային լուսավորության կառուցման շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմավորել հայտերը գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

3) Ավետիս Առաքելյան – Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,

Հանձնաժողովի անդամներ՝

4) Դմիտրի Մանվելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ,

3) Դավիթ Հարությունյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ

4) Վարդան Զարիֆյան – բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետ,

5) Հրաչիկ Վարդանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» հունիսի 2025 **թվականի** N 1184-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ 188Ա ՇԵՆՔԻ ԲԱԿԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով Գյումրի համայնքի Շահումյան 188ա շենքի բակային լուսավորության կառուցման շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով սահմանել՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Անդրանիկ Չադրյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Հարություն Մխիթարյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի տեղակալ,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք. Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

<<19>> հունիսի 2025 թվականի N 1183-Ա

## ՀԱԿՈԲ ՀԱԲԵԹՆԱԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ի նքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հակոբ Հաբեթնակի Հակոբյանի 2025 թվականի հունիսի 18-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Հակոբ Հաբեթնակի Հակոբյանին պայմանագրային հիմունքներով 2025 թվականի հունիսի 19-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի փորձագետ՝ նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր:

**2.** Ամսական աշխատավարձի չափը սահմանել 253.000 ( երկու հարյուր հիսուներեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

**3.**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հակոբ Հաբեթնակի Հակոբյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«19» հունիսի 2025 թվականի № 1182-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇՉԵԴՐԻՆԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 396.28 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 284.89 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հունիսի 12-ի №1102–Ա որոշումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Շչեդրինի փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 396.28 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 284.89 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինություններին տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մ. Շչեդրինի փողոց, 7/10 շինություն**

2025-06-19 ... GMT+4
miD

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«19» հունիսի 2025 թվականի № 1181-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 01–Ի №716-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 2018 թվականի մարտի 21-ի օրենքի 33–րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի ապրիլի 01–ի «Գյումրի քաղաք, Ղուկասյան փողոց 163 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №14022018-08-0009) երկու մասերի բաժանելու նպատակով նոր հասցեներ տրամադրելու մասին» №716-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) վերնագրում և որոշման կայացման մեջ **«վկայական №14022018-08-0009»** բառերը և թվերը փոխարինել **«վկայական №07022023-08-0006»** բառերով և թվերով:
2) որոշման կայացման մեջ **«0985.78»** թիվը փոխարինել **«985.78»** թվով:

2025-06-19 09:15:57 GMT+4
Ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«19» հունիսի 2025 թվականի № 1180-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ն. ՂՈՐՂԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 48.71 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0769-0001-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Ն. Ղորղանյան փողոցի հարևանությամբ գտնվող 48.71 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0769-0001-ից) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ն. Ղորղանյան փողոց, 129/8 հողամաս**

2025-06-19 15:15:55 GMT+4
Ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի